

Եթէ քո թափած արցունիքը վարար
Գետերի փոխուէր եւ Սեւան հոսէր,
Սեւանը կ'ելնէր ափերից իր քար
Եւ ովկիանոսի ճայնով կը խօսէր:

**Թէ միանգամից որբերը բոլոր
Եւ հառաջանի ճայները տիսուր
Ելնէին դէպի երկնային ոլորտ,
Պատրոռուէր պիտի աստծոյ սիրտը խուլ:**

Ասա, ուրեմն, այդ ի՞նչ ուժ ունի,
Ինչպէս դիմանայ իմ սիրտը չնշին,
Բիրտ հարուածների այդ սուր դաշոյնի,
Եւ կոմիտասեան երգի հառաջին:

Թամարա Պոնտմարյովա (Խուս Բանաստեղծ)

ՀԱՅԱՍՏԱՆ

Անդ, ուր անտառում վազր է շրջում,
Եւ վիշտ կայ՝ դաշուած ամէն քարի.
Ուր գետը սարին սէ՛ր է խշշում,
Փարուելով կրծքին նրա վայրի.

Ուր վե՛ր է մղւում մարդու հոգին,
Ծփոթած ամպն ու լեռը քարէ,
Ուր Արարատը ամպի տակից
Մագում է որպէս ծիւնէ արեւ.

Ուր վայրի ցեղերն անապատի
Խուժել են հո՛ղն այս հորդաներով,
Նախնիրնե՛ր սփուած իրենց ճամփին
Եւ խիզախներին խաչ հանելով.

Ուր մարդը կարող էր փրկուել մահից
Լոկ արծիւների բներում սէզ,
Եւ ուր բեւերն իր արծուային
Ժողովուրդը չի՛ ծալել երբեք:

Նա՛, փիւնիկի պէս մոխրից յառնած,
Այգի՛ է տնկում անապատում,
Եւ անդ, ուր հուր ու սուր էր առաջ,
Ծաղի՛կ է ծաղկում,
Բալի՛կ՝ ժպտում...

... Եւ ես չգիտեմ, թարթիչներիս
Ցո՞ղ է վար իշնում, անի՞ւնը թանկ,
Փոշի՞ն դարաւոր ճամփաների,
Թէ՞ արտասուժն իմ ուրախութեան...

Թարգմ. Գէորգ Էմինի